ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-23

# ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «27» հունվարի 2022թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), ի դեմս նախագահ Աշոտ Սաղյանի, որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ -ը (այսուհետ՝ Կազմակերպություն),ի դեմս տնօրեն Վլադիմիր Հարությունյան-ի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 151636000 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի **6**-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ -ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ -ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ –ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ –ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 151636000 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ:

## 4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

## 7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| | |
|---|---|
| **ՀՀ ԳԱԱ** | **ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ** |
| ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24 | 0015, ք. Երևան,Գր. Լուսավորիչի 15 |
| Հ/հ 900011024115, | Հ/հ 900018005380 |
| ՀՎՀՀ 00005673 | ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան |
| ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան | ՀՎՀՀ 01506257 |
| ՀՀ ԳԱԱ նախագահ՝ _____ *(ստորագրություն)* | Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)* |
| **Աշոտ Սաղյան** | **Վլադիմիր Հարությունյան** |
| Կ. Տ. | Կ. Տ. |

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Հավելված N 1
«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Վլադիմիր Հարությունյանը, վկայում ենք, որ

Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27»հունվար 2022 թ.N Ե-23 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 151636000 (մեկ հարյուր հիսունմեկ միլիոն վեց հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

| ՀՀ ԳԱԱ | ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ ՊՈԱԿ |
|---|---|
| ՀՀ ԳԱԱ նախագահ՝ | Տնօրեն |
| _____ (ստորագրություն) | _____ (ստորագրություն) |
| Աշոտ Սաղյան | Վլադիմիր Հարությունյան |

Հավելված N 2
«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

« Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման » ծրագրի
*(ծրագրի անվանումը)*

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ծրագրի իրականացման նպատակը 4 հիմնական գիտական ուղղությունների շրջանակներում (մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ, տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ, ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն) ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան լուծումների առաջադրումն է: Ծրագրի իրականացման ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվում ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրից բխող հիմնախնդիրների լուծմանը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):
   - Ծրագրի իրականացման ժամանակահատվածը մեկ տարի է՝ սկիզբ 01.01.2020թ., ավարտ՝ 31.12.2020թ.
   - Աշխատանքային խմբերն ըստ ծրագիրը կազմող ենթաբաժինների օրացուցային պլանով նախատեսված աշխատանքների կատարման մասին ներկայացնում են միջանկյալ հաշվետվություններ:
   - Միջանկյալ գիտական արդյունքները և ամփոփիչ գիտական հաշվետվությունը ներկայացվում են պատվիրատուին՝ ՀՀ ԳԱՍ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի եզրակացության հիման վրա:
   - Միջանկյալ ամփոփիչ հաշվետվությունների ձևավորումը կատարվում է պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան:
4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

***1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ:***

**Հանքարդյունաբերության զարգացման միտումները, հնարավորությունները և հեռանկարները՝ ներկան և ապագան Սյունիքի մարզում**

ՀՀ արդյունաբերության կարևորագույն ճյուղերից մեկը հանքարդյունաբերություն է, որը էական դեր է խաղում ինչպես ոլորտի, այնպես էլ ողջ տնտեսության զարգացման գործում: Իսկ ներքին

ռեսուրսներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշը արդյունաբերական ներուժն է: Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները ստիպեցին էլ ավելի կարևորել հանքարդյունաբերության զարգացումն ու առկա պոտենցիալի գնահատումը: Հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է նաև պետական մակարդակով, ինչի մասին է վկայում Կառավարության 2021-2026 թթ ծրագրում 2.8՝ բնական ռեսուրսների կայուն կառավարում, կետի ներառումը: Իսկ քանի որ ՀՀ Սյունիքի մարզում կենտրոնացած է հանքարդյունաբերության հիմնական ներուժը, ուստի հենց այդ դրույթն էլ պայմանավորեց թեմայի ընտրությունը: Հատկանշական է նաև այն փաստը, որ այժմ պետք է հիմնականում զարկ տալ հանքարդյունաբերության ոչ այնքան քանակական, որքան որակական զարգացմանը, այսինքն՝ ռեսուրսների ճիշտ կառավարմանն ու ստացված հանքարդյունաբերական արտադրանքի՝ տեղում մշակմանը: Հաշվի առնելով վերոնշյալը, կարևորում ենք նաև ուսումնասիրել հանքադյունաբերական արտադրանքի արտահանման առանձնահատկությունները, մետաղական հանքաքարերի արտահանման ազդեցությունը ՀՆԱ–ի վրա, արտահանման դիվերսիֆիկացիայի առաջնայանությունները և այլ կարևոր հարցադրումներ:

**Կոռուպցիայի հաղթահարման ռազմավարական հիմնախնդիրները ՀՀ-ում**

Կոռուպցիան և հանրային արդյունավետ կառավարումը անհամատեղելի են: Կոռուպցիան խաթարում է իրավական և սոցիալական պետության հիմքերը, քայքայում է հասարակության վստահությունը ժողովրդավարության նկատմամբ:

Տվյալ թեմայի հետազոտության ընթացքում վիճակագրական տվյալների հիման վրա կներկայացվի այն որ, 2022-2025թթ. հանրային կառավարման ոլորտի վնասակար հետևանքների գնահատականը, մասնավորապես՝ գնահատվելու են՝ կոռուպցիան փոշիացնում է պետական միջոցները, կոռուպցիայի հետևանքով աճում է բյուրոկրատիզմը, քաշքշուկը պետական ապարատում, ընկնում է հանրային ծառայությունների որակը, կոռուպցիան նպաստում է ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության քանակական նվազմանը, քանի որ ձեռնարկատերերը վճարվող կաշառքն առանձնացնում են իրենց շահութաբաժնից, կոռուպցիան նվազեցնում է միջազգային կազմակերպությունների, այլ պետությունների, օտարերկրյա ձեռնարկատերերի ներդրումների քանակը, քանի որ պետությունը կորցնում է իր վստահությունը: Այսպիսով կոռուպցիայի առկայությունը պետական համակարգում քայքայում է այն ներսից՝ խոչընդոտելով պոտենցիալ զարգացմանը: ՀՀ հետագա կայուն տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է մշակել կոռուպցիայի հաղթահարման ռազմավարական քայլեր:

**Ճգնաժամային երկրների վարկանիշի տնտեսական հիմնախնդիրները և լուծման ուղիները**

Համաշխարհային հանրության վերափոխման ժամանակակից պայմաններում պետության վարկանիշը առանձնահատուկ նշանակություն ունի: Այն ձևավորվում է օբյեկտիվ, միմյանց հետ փոխկապակցված պետական կառուցվածքի բնութագրերի համախմբության հիման վրա: Դրանք իրենցից ներկայացնում և ընդգրկում են պետական կարգին ամբողջությամբ վերաբերող հարցերը(պետության սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր հիմքերը, աշխարհագրական և այլն):

Տեղեկատվական հասարակության ձևավորման պայմաններում հաղորդակցական գործընթացները ստանում են սկզբունքորեն տարբեր ձևեր՝ պայմանավորված զանգվածային լրատվության միջոցների ինտենսիվ ազդեցության, որտեղ միջազգային լսարանը դառնում է ոչ այնքան իրական առարկաների և իրադարձությունների սպառող: Այս իրավիճակում ավելի ու ավելի դժվար է դառնում որոշակի տեղեկատվություն, ուղերձ փոխանցել թիրախային «լսարանին»: Այս խնդրի լուծման ուղիներից մեկը օբյեկտի՝ երկրի, դրական վարկանիշի ստեղծումն է: Համաշխարհային հանրության ընկալումը կարծրատիպային է, և դրական վարկանիշ ունեցող երկրի համար հեշտացնում է այլ երկրիների հետ տնտեսական հարաբերությունների փոխգործակցությունը:

Ճգնաժամային իրավիճաների հաղթահարման համար խիստ կարևոր են, որ երկրի վարկանիշի բաղկացուցիչ մասերի բարենորոգությունները համալիր բնույթ կրի: Տնտեսական հիմնախնդիրների բացահայտումը և լուծման տարբերակների ներկայացումը թույլ կտա երկրին այլ երկրների համեմատ մեկ մակարդակ բարձանալ: Ժամանակակից պայմաններում երկրի տնտեսական և ռազմական հզորության զարգացմանը զուգընթաց կարևորվում է նաև երկրի վարկանիշի բարձրացման եղանակով արտաքին և ներքին հասարակության վրա ազդելու նրա կարողությունը:

Վերջին տարիների ընթացքում երկրում տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք, բացի քաղաքական և տնտեսականից, հիմնարար փոփոխություններ են առաջացրել բնակչության գիտակցության մեջ: Հայտնի է, որ ցանկացած երկրի վարկանիշն է երաշխիք հանդիսանում ազգային խնդիրների, անվտանգության և զարգացման ապահովման համար: Հետևաբար, հայոց կայուն պետականության հիմքում պետք է դրվի երկրի բարձր վարկանիշի հաստատումը:

*2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ*:

**Պարենային անվտանգության հիմնահարցերը ՀՀ տնտեսական անվտանգության համակարգում**

Պարենային անվտանգության ապահովումն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Համաշխարհային պարենային հիմնախնդիրը 21-րդ դարի չլուծված գերխնդիրներից է: Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների վերլուծությունը վկայում է, որ էներգետիկ արժեքով հաշվարկված, կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը կազմում է շուրջ 55 %:

Պատերազմի հետևանքով մեծապես կրճատվել է նաև Արցախի Հանրապետության գյուղատնտեսական ներուժը՝ հազարավոր հեկտար վարելահողեր մնացել են Ադրբեջանի տիրապետության տակ, ինչը կհանգեցնի արտադրվող գյուղատնտեսական մթերքների ծավալների էական կրճատմանը: Միևնույն ժամանակ, սահմանային և ռազմական նոր ենթակառուցվածքների ստեղծման հետևանքով, կրճատվել է նաև ՀՀ գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի՝ մասնավորապես արոտավայրերի հասանելիությունը:

Ստեղծված իրավիճակը սպառնալից է համարվում Հայաստանի և Արցախի ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ հանդիսացող պարենային անվտանգության համար: Ելնելով այս ամենից՝ ուսումնասիրվելու և վերլուծվելու են ՀՀ պարենային անվտանգության հիմնահարցերը, վերլուծվելու և գնահատվելու են ՀՀ պարենային անվտանգության համակարգի հետ փոխկապակցված տնտեսության ճյուղերի ներուժը, ինչպես նաև տրվելու են համապատասխան առաջարկություններ՝ նշված հիմնախնդիրների իրագործման ուղղությունների վերաբերյալ:

### *3. Ծառայությունների ոլորտի զարգացում և սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ:*

**ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացման հիմնական ուղիները**

20-21րդ դարերում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումները, հատկապես՝ համաշխարհային և լոկալ պատերազմները, առաջին պլան մղեցին երկրների ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,որի կարևորագույն բաղադրատարրերից է տնտեսական անվտանգությունը: ՀՀ տնտեսության համար տնտեսական անվտանգության բարձր մակարդակի ապահովումը անկախացման տարիներից ի վեր եղել է տնտեսական քաղաքականության առանցային խնդիրներից: Այդուհանդերձ այն առավել սուր կերպով արտահայտված է այսօր՝ ետմատերազմյան իրավիճակում: Վերլուծության հիմնական նպատակը կլինի ՀՀ տնտեսական անվտանգության մակրոտնտեսական գնահատումը և վերջինիս հիման վրա առկա սպառնալիքների ու մարտահրավերների բացահայտումը, որը հիմք կհանդիսանա տնտեսական անվտանգության հայաստանյան մոդելի կառուցման համար:

Արդյունքում՝

- կմշակվի տնտեսական անվտանգության մակարդակի գնահատման նոր մեթոդաբանություն, որի ցուցանիշների և չափորոշիչների համակարգն ու դրանց հիման վրա որոշվող տնտեսական անվտանգության «տիրույթները»՝ հնարավոր սպառնալիքների կանխատեսման և «վաղ» հայտնաբերման հնարավորություն կընձեռեն:
- ՀՀ տնտեսական անվտանգության համալիր-գործոնային հետազոտության հիման վրա կգնահատվի տնտեսական անվտանգության ապահովման մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետությունը և կբացահայտվեն տնտեսական անվտանգությանն հիմնական սպառնալիքները և մարտահրավերները:

- տնտեսական գործունեության առանձին տեսակների (ոլորտների) թողարկման ծավալների փոփոխությունների՝ ՀՆԱ-ի վրա ազդեցության չափի որոշման միջոցով կգնահատվի հետագա տնտեսական աճի ապահովման հնարավորությունները:

**Թվայնացումը՝ որպես ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման կարևորագույն ուղի**

Ողջ աշխարհը ապրում է աննախադեպ տեխնոլոգիական նորարարությունների և թվայնացման դարաշրջանում, ինչն ազդարարում է «Չորրորդ արդյունաբերական հեղափոխության» սկիզբ: Վերջինս յուրաքանչյուր երկրի համար դարձել է արտաքին գործունեության միջավայրը ձևավորող կարևորագույն գործոն, ինչպես նաև տնտեսության և առանձին կազմակերպությունների մրցունակությունն ապահովող հիմնական նախապայման: Քովիդ-19-ը համավարակը ևս մեկ անգամ ապացուցեց, որ տնտեսության թվայնացման անհրաժեշտությունը դարձավ առավել կարևոր, քան երբևէ: ՀՀ կառավարությունը կարևորում է թվայնացումը՝ որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման և համաշխարհային տնտեսության մեջ մրցունակությունն ապահովելու հիմնական գործոն: Դրա վկայությունն է այն, որ ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրի 2–րդ բաժնի «Տնտեսություն» 2.3 ենթաբաժնում առանձնակի ուշադրության են արժանացել ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերում և ոլորտներում թվային տնտեսության անընդհատ աճող պահանջների արդյունավետ փոխգործակցման և սպասարկման համար արդի պահանջներին համապատասխան ենթակառուցվածքների ներդրումը, պետական կառավարման մարմինների կողմից թվային տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև տնօրինվող տեղեկատվության թվայնացումը և այլն:

Տնտեսության թվայնացման անհրաժեշտությունը շեշտադրվում է նաև ԵԱՏՄ երկրների շրջանակում, մասնավորապես քննարկվում են ԵԱՏՄ երկրների տնտեսությունների թվային վերափոխումների նախագծեր: Վերջինս վերաբերում է ագրոարդյունաբերական համալիրում թվային հարթակների զարգացումանը, ԵԱՏՄ-ում աշխատանքի էլեկտրոնային բորսայի և պետական մունիցիպալ գնումների համար փոխկապակցված էլեկտրոնային առևտրային հարթակների ստեղծմանը, տրանսպորտային լոգիստիկայի ճյուղում «անթուղթ» տեխնոլոգիաների ներդնրմանը, եվրասիական «հնգյակի» երկրների բիզնեսի զարգացմանը և այլն: Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել ու բացահայտել տնտեսության թվային փոխակերպումների անհրաժեշտությունը և այն ծառայեցնել ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանը:

***4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն***

***Արդի ազգային տնտեսության հիմնախնդիրները***

Հայ տնտեսագիտական միտքը կուտակել է որոշակի նյութ հանրապետության արդի տնտեսական տեղաշարժերի ու կատարվող փոփոխությունների վերաբերյալ: Սույն ուսումնասիրությունն այդ շարժման ուրվագիծն է հանդիսանալու: ՀՀ տնտեսության ամենակարևոր հիմնախնդիրներն ուսումնասիրվել են հայ տնտեսագետների կողմից: Հենց այս կանորագույն հիմնախնդիրների համեմատական վերլուծությունն էլ կիրականացվի տվյալ հետազոտության շրջանակներում: Թեմայի շրջանակներում կուսումնասիրվեն ՀՀ տնտեսության այն հիմնախնդիրները, որոնք առավել առաջնային են համարվել ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրում:

5. Ակնկալվող արդյունքները. Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածների հրապարակում, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում մենագրության հրապարակում, կոլեկտիվ մենագրության և հոդվածների ժողովածուի հրապարակում:

Կազմակերպության
տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_Վլադիմիր Հարությունյան_)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_Վլադիմիր Հարությունյան_)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Հավելված N 3

«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

## « ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման » ծրագրի

*(ծրագրի անվանումը)*

| h/h | Իրականացվելիք միջոցառման | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | համառոտ բովանդակությունը | կատարման ենթակա գործառույթների նկարագիրը | ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները) | կատարման ժամկետները | պահանջվող գումարը (հազար դրամ) |
| | ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագիր | Գիտական հետազոտությունների 4 ուղղություններով՝<br><br>1. Մակրոտնտեսական հիմնախնդիրներ և ֆինանսներ<br><br>2. Տնտեսության իրական հատվածի հիմնախնդիրներ<br><br>3. Ծառայությունների ոլորտի զարգացում ու սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրներ<br><br>4. Տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմություն | ✓ Հանքարդյունաբերության զարգացման միտումները, հնարավորությունները և հեռանկարները՝ ներկան և ապագան Սյունիքի մարզում<br>✓ ՀՀ տնտեսական անվտանգության մակարդակի բարձրացման հիմնական ուղիները<br>✓ Կոռուպցիայի հաղթահարման ռազմավարական հիմնախնդիրները ՀՀ-ում<br>✓ Թվայնացումը՝ որպես ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացման կարևորագույն ուղի<br>✓ Պարենային անվտանգության հիմնահարցերը ՀՀ տնտեսական անվտանգության համակարգում<br>✓ Ճգնաժամային երկրների վարկանիշի տնտեսական հիմնախնդիրները և լուծման ուղիները<br>✓ Արդի ազգային տնտեսության հիմնախնդիրները | Web of Science, Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում գիտական հոդվածների հրապարակում, Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում մենագրության հրապարակում, կոլեկտիվ մենագրության և հոդվածների ժողովածուի հրապարակում: | I եռամսյակ<br><br>II եռամսյակ<br><br>III եռամսյակ<br><br>IV եռամսյակ | **30327.2**<br><br>**37909**<br><br>**37909.0**<br><br>**45490.8** |
| Ընդամենը | | | | | | **151636** |

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_Վլադիմիր Հարությունյան_)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (__Վլադիմիր Հարությունյան_)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

Հավելված N 4
«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

« Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման » ծրագրի
*(ծրագրի անվանումը)*

*հազար դրամ*

| Հ/հ | Հոդվածի անվանումը | Ֆինանսավորման ծավալը | այդ թվում՝ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ (20%) | 2-րդ եռամսյակ (25%) | 3-րդ եռամսյակ (25%) | 4-րդ եռամսյակ (30%) |
| 1 | աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը | 118150.5 | *23630.1* | *29537.6* | *29537.6* | *35445.2* |
| 2 | տնտեսական և այլ ծախսեր | 33485.5 | *6697.1* | *8371.4* | *8371.4* | *10045.7* |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | **151636** | ***30327.2*** | ***37909*** | ***37909.0*** | ***45490.8*** |

*Աշխատավարձի ֆոնդը հաշվառված է 13 ամիս:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վլադիմիր Հարությունյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

Հավելված N 4.1
«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

## ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՇԱԽՍԵՐ *

| Հ/հ | Ծախսերի անվանումը | Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ) |
|---|---|---|
| 1 | Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝ | 5270.0 |
| | *էլեկտրաէներգիայի ծառայություն* | *3500.0* |
| | *գազի ծառայություն* | *0* |
| | *ջրամատակարարման ծառայություն* | *560.0* |
| | *կապի ծառայություն* | *1210.0* |
| | *աղբահանություն* | *0* |
| 2 | Գույք | 500.0 |
| 3 | Սարքեր և սարքավորումներ | 2000.0 |
| 4 | Նյութեր | 2500.0 |
| 5 | Գործուղումներ | 0 |
| 6 | Գիտական միջոցառումների կազմակերպում | 500.0 |
| 7 | Արշավախմբեր | 0 |
| 8 | Հրատարակման ծախսեր | 5000.0 |
| | Այլ | 17715.5 |
| Ընդամենը | | **33485.5** |

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Վլադիմիր Հարությունյան )
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կազմակերպության
գլխավոր հաշվապահ՝ _____ (Կարինե Հակոբյան)
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«27» հունվարի 2022 թ.
N Ե-23 պայմանագրի

# ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*«Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման» ծրագրի*

| Հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | Պաշտոն | Գիտական աստիճան | Ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի | Տնօրեն, Գիտական ուղղության ղեկավար, գլխավոր գիտաշխատող | տ.գ.դ | 575.0 |
| 2 | Սարգսյան Լիլիթ Նորայրի | Փոխտնօրեն, Գիտական ուղղության ղեկավար, առաջատար գիտաշխատող | տ.գ.թ | 475.0 |
| 3 | Բաղդասարյան Քրիստինե Յուրիի | Գիտական քարտուղար, գիտական խմբի ղեկավար, առաջատար գիտաշխատող | տ.գ.թ | 365.1 |
| 4 | Սուվարյան Յուրի Միքայելի | Տնօրենի խորհրդական, | տ.գ.դ | 100.0 |
| 5 | Հակոբյան Կարինե Գեղամի | Գլխավոր հաշվապահ | | 330.0 |
| 6 | Սարինյան Ռոբերտ Ներսեսի | Գիտական ուղղության ղեկավար, գլխավոր գիտաշխատող | տ.գ.դ | 349.9 |
| 7 | Մանուչարյան Մերի Գագիկի | Գիտական ուղղության ղեկավար, առաջատար գիտաշխատող | տ.գ.թ | 349.9 |
| 8 | Մարկոսյան Հայկ Աշոտի | Առաջատար գիտաշխատող, | տ.գ.թ | 250.0 |
| 9 | Գաբրիելյան Բելլա Վալերիի | Ավագ գիտաշխատող | տ.գ.թ | 199.8 |
| 10 | Պապիկյան Ստեփան Ռաֆիկի | Ավագ գիտաշխատող | տեխ.գ.թ | 199.8 |
| 11 | Պողոսյան Շողեր Պյոտրի | Ավագ գիտաշխատող | տ.գ.թ | 199.8 |
| 12 | Մանուկյան Գրիգոր Թաթուլի | Ավագ գիտաշխատող | տ.գ.թ | 199.8 |
| 13 | Հարությունյան Գևորգ Արամի | Ավագ գիտաշխատող | տ.գ.թ | 199.8 |
| 14 | Դալլաքյան Սվետլանա Արկադիի | Գիտական խմբի ղեկավար, գիտաշխատող | տ.գ.թ | 230.2 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15 | Հակոբյան Եվգենյա Արտաշեսի | Գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 16 | Զախարյան Արմինե Գրիգորի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 17 | Փարսադանյան Տաթևիկ Սմբատի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 18 | Իսահակյան Ռազմիկ Կամոյի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 19 | Ոսկանյան Գոհար Վազգենի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 20 | Շահինյան Տաթևիկ Վազգենի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 21 | Ազատյան Լիանա Սամվելի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 22 | Կյուրեղյան Արփինե Մեխակի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 23 | Մակարյան Աննա Ռուզվելտի | գիտաշխատող | տ.գ.թ | 150.2 |
| 24 | Պետրոսյան Դավիթ Արմենակի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 25 | Ղազազյան Վանո Լևոնի | Կրտսեր գիտաշխատող | տ.գ.թ | 119.8 |
| 26 | Սարգսյան Անուշ Տիգրանի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 27 | Ըռքոյան Արսեն Սլավիկի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 28 | Պողոսյան Մարիամ Վարդանի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 29 | Պետրոսյան Լիլիթ Մանվելի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 30 | Գրիգորյան Դոնարա Հովիկի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 31 | Մուրադյան Մերի Համբարձումի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 32 | Գոգչյան Ինեսսա Ժիրայրի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 33 | Գրիգորյան Սոնա Հրաչիկի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 34 | Մուրադյան Լիլիթ Մուրադի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 35 | Ասատրյան Հովհաննես Սիմոնի | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 36 | թափուր | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 37 | թափուր | Կրտսեր գիտաշխատող | | 119.8 |
| 38 | թափուր | Կրտսեր գիտաշխատող | | 87.3 |
| 39 | Նալբանդյան Հմայակ Ռոմիկի | տնտեսագետ | | 110.0 |
| 40 | Կարապետյան Ռուզաննա Արմենակի | Կադրերի ավագ տեսուչ, հաշվետար | | 275.0 |
| 41 | Մարկոսյան Անահիտ Խաչատուրի | Հրատարակչության պատասխանատու | | 220.0 |
| 42 | Մանուկյան Վլադիկ Լևոնի | Ընդհանուր բաժնի վարիչ | | 187.0 |
| 43 | Ավագյան Նարինե Հրանտի | գրադարանավար | | 143.0 |
| 44 | Բաբայան Մաղենա Մկրտչի | համակարգչայինօպերատոր | | 137.5 |
| 45 | Սարաֆյան Դիաննա Գևորգի | համակարգչայինօպերատոր | | 137.5 |
| 46 | Համբարձումյան Մարիետա Կառլենի | համակարգչայինօպերատոր | | 137.5 |
| 47 | Առաքելյան Անահիտ Միշայի | քարտուղար-գործավար | | 154.0 |
| 48 | Անտոնյան Արսեն Ռուբենի | վարորդ | | 165.0 |
| 49 | Ավետիսյան Սահակ Շավարշի | պահակ | | 134.2 |
| 50 | Կարապետյան Հասմիկ Հենրիկի | հավաքարար | | 147.4 |
| **Ընդամենը** | | | | **9088.5** |

*Ծանոթություն. Սպասարկող անձնակազմի՝ (գլխավոր հաշվապահ, կադրերի ավագ տեսուչ, հրատարակչության պատասխանատու, ընդհանուր բաժնի վարիչ, գրադարանավար, համակարգչային օպերատորներ, քարտուղար–գործավար, վարորդ, հավաքարար և պահակ) աշխատավարձերը բարձրացված են 10% գնաճի չափով՝ (աղբյուր՝www.armstat.am):

**Կազմակերպության Տնօրեն՝** _____ **(Վլադիմիր Հարությունյան)**
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

**Կազմակերպության Կադրերի ավագ տեսուչ՝** _____ **(Ռուզաննա Կարապետյան)**
*(ստորագրություն)* *(անուն ազգանուն)*

Կ.Տ.